| | | |
|---|---|---|
| Բլանկներ և յայտարարութիւն լրագիրներում | 6 | 50 |
| Մատենից գին | 2 | |
| Նորոգութիւն ուսումնարանի տան | 11 | 79 |
| | 1593 | 96 |

Ծախքը մուտքից հանելով առ 1 սեպտեմբերի 1889 թուի մնում էր ուսումնարանի դրամարկղում 202 ռուբլի 1 կոպէկ։

Բացի դորանից սոյն երեք տարուայ ընթացքում եղան հետևեալ կտակաւանդութիւնները յօգուտ դպրոցիս։

1. Առաջին տարին վախճանուելով դպրոցիս հոգաբարձու Մովսէս Դոնդարեանցը կտակեց ուսումնարանին 1000 ռուբլի, որ դեռ ստացուած չէ ժառանգներից *)։

2. Հանգուցեալ Զաքարիա Ղարղաձեանցի կտակած 500 ռուբլուց հոգաբարձութիւնս ստացաւ արդէն 300 ռուբլի. մնում է ստանալի 200 ռուբլի։

Ուրեմն ուսումնարանը 1889 թուի սեպտ. 1ին ունէր առ ձեռն դրամ 500 ռուբլի 1 կոպէկ և 1200 ռուբլի ստանալիք։

Հոգաբարձուք՝ Գէորգ քահ. Աղանեանց, Ծուրտուրեան Ն. Գրիգորեանց՝ Եսայի Աբրահամեանց։

---

## ՀԱՇԻՒ

Ելից և մտից դրամոց եկեղեցական — ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազէտ քաղաքի վասն $188^7/_8$ ուսումնական տարւոյ։

### ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

1. Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն րուբլի—(2940 ր.)

2. Սրանից առած է տղայոց Ս. Մեսրոպեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն և եօթ րուբլի—(377 ր.)

3. Մնում է դրամագլխից զանազան անձանց վրայ շահեցնելու համար մուրհակագրերով երկու հազար հինգ հարիւր վաթսուն և երեք րուբլի—(2563 ր.)

(*) Կտակակատարների մէջ եղած տարաձայնութեան պատճառով հոգաբարձութիւնս չկարողացաւ մի օր եւ է կերպով համաձայնութիւն կայացնել նոցա հետ, ուստի դիմեցինք կոնսիստորիայի օգնութեան, որով համարեա թէ գործը վերջանալու վրայ է։

Գ. Վերոգրեալ 2 յօդուածում յիշուած 377 ր. որը ծախսուած է տղայոց ուսումնարանի շինութեան վրայ, Հոգաբարձութիւնը պարտաւոր է ուսումնարանի մուտքը աւելացած ժամանակին դարձնել նոյնքան գումար յատկացնել դրամագլխի հաշւին։ Այս գումարը 377 ր. գրուած է մուտք № 78։

### ՄՈՒՏՔ

Սկսեալ ի 14 Յուլիսի 1887 Ամի ց30-ն Օգոստոսի 1888 Ամի։

| | | ր. | կ. |
|---|---|---|---|
| 1. | Անցեալ 188$^{6}/_{7}$ ուսում. տարւոյ աւելացած գումարը | 138 | 74 |
| 2. | Ուսումնարանապատկան դրամագլխի տոկոսը . . | 453 | 31 |
| 3. | Երեսփոխանից մոմի արդիւնք . . . . | 60 | |
| 4. | Ս. Աստուածածին եկեղեցուց՝ արդիւնք . . | 46 | |
| 5. | Նոյն եկեղեցու մասանց արդիւնքը . . . | 80 | 71 |
| 6. | Վաճառուած է հին փայտեր, գերանի կտորներ և աղիւս | 73 | 4 |
| 7. | Ուսումնարանապատկան 11 կրպակի վարձը . . | 338 | 68 |
| 8. | 211 պսակատէրերից նուիրուած է . . . . | 172 | 9 |
| 9. | Նուէր զանազան անձինքներից . . . . | 24 | |
| 10. | 198 աշակերտի և աշակերտուհու թոշակ. . . | 662 | |
| 11. | Մոմավաճառութեան կապալադրամը . . . | 837 | 83 |
| 12. | Թատրոնական ներկայացումներից զուտ արդիւնք . | 121 | 23 |
| 13. | Օրիորդաց ձեռագործների վիճակախաղից և ծախածից | 79 | 10 |
| 14. | Դրամագլխից վեր առած է . . . . . | 377 | |
| | Գումար է | 3463 | 73 |

### ԵԼՔ

Սկսեալ ի 14 Յուլիսի 1887 Ամի ց 30 Օգոստոսի 1888 Ամի.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Տղայոց ուսումնարանի շինութեան վրայ ծախսած է . | 1195 | 50 |
| 2. | 4 ուսուցչի և 2 վարժուհու ռոճիկ . . . | 1650 | |
| 3. | Ուսումնարանապատկան կրպակների վրայ ծախսած է . | 51 | 35 |
| 4. | Ուսումնարանի ծառաներին . . . . | 111 | |
| 5. | Օրիորդաց ձեռագործի նիւթեղէնք . . . | 63 | 54 |
| 6. | Մանրածախք և վառելիք . . . . | 92 | 21 |
| 7. | Հարկաւոր բլանկների տպագրութեանը . . . | 28 | 45 |
| 8. | Երևանի Հայոց կոնսիստորիային . . . . | 28 | |
| 9. | Ուսումնարանի մէկ սեղան և մէկ գզրոց . . . | 19 | |
| 10. | Վարժուհու տների վարձը . . . . . | 40 | |
| | Գումարն է | 3279 | 5 |

## ԱՊԱՌԻԿ

| | | | |
|---|---|---|---|
| 1· | Որը գրած է մուտք՝ բայց դեռ չէ ստացուած . . | 62 | 25 |
| 2· | 84 հատ վաճառելի գրքեր . . . . | 63 | 30 |

Ապառնի, որը պէտք է ստացուի և մուտք գրուած չէ

| | | | |
|---|---|---|---|
| 1· | Պատրաստի ձեռագործ . . . . | 100 | |
| 2· | Մեսրովբ Տէր Յովհաննէսեանի մուրհակը . . . . | 60 | |

## ՀԱՇԻՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ

Եկեղեցական—ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանաց Հայոց Նոր-Բայազիտ քաղաքի վասն $188^{8}/_{9}$ ուսում. տարւոյ.

1· Ուսումնարանապատկան դրամագլխի գումարն է երկու հազար ինն հարիւր քառասուն րուբլի (2940) ր.)

2· Սրանից առած է տղայոց Ս. Մեսրովբեան ուսումնարանի շինութեան վրայ ծախսելու երեք հարիւր եօթանասուն եօթն րուբ. (377).

Այս գումարը գրուած է մուտք յ30 օգոստոսի 1888 թ. համ. 78.

3· Ներկայ $188^{8}/_{9}$ ուսում. տար. ընթացքում դարձեալ առած է և ծախսած ուսումնարանի վրայ երեք հարիւր ութսուն ութ րուբ. (388 ր.)

Այս գումարը գրուած է մուտք ի 20 յուլիսի 1889 թ. համ. 54.

4· Դրամագլխի մնացած գումարը երկու հազար մէկ հարիւր եօթանասուն և հինգ րուբլի (2175 ր.) տրուած է տոկոսով մուրհակագրերով.

## ՄՈՒՏՔ

Սկսեալ յ30 օգոստոսի 1888 թուի ց22 յուլիսի 1889 թ.

| | | | |
|---|---|---|---|
| 1· | Անցեալ $188^{7}/_{8}$ ուս. տար. աւելացած գումարը . | 184 | 68 |
| 2· | Նուէր զանազան անձինքներից . . . . | 69 | 60 |
| 3· | Ուսումնարանապատկան դրամագլխի տոկոսը . . | 262 | 20 |
| 4· | Ուսումնարանապատկան կրպակների վարձը . . | 260 | |
| 5· | Պսակատէրերից նուէրներ . . . . . | 176 | 50 |
| 6· | Աշակերտների և աշակերտուհիների թոշակը . . | 747 | |
| 7· | Օրիորդաց ձեռագործի վաճառելուց . . . | 29 | 50 |
| 8· | Թատրոնական ներկայացումներից . . . | 111 | 75 |
| 9· | Ս. Աստուածածին եկեղեցւոյ արդիւնքը վասն 1888 և 1889 թ. . . . . . . . | 200 | |
| 10· | Նոյն և Ս. Կարապետ եկեղեցեաց մասանց տանից . | 45 | 90 |
| 11· | «Ցիշատակարանի» վաճառելուց և մանր մուտք . . | 23 | |
| 12· | Մոմավաճառութեան կապալադրամը . . . | 420 | 29 |
| 13· | Դրամագլխից առած է . . . . . | 388 | |

ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1· | 6 Ուսուցչի և 2 վարժուհու ռոճիկը . . . | 2300 | |
| 2· | Ծառաներին վարձ . . . . . . | 107 | |
| 3· | Շինութեան վրայ և ձեռագործի . . . . | 112 | 74 |
| 4· | Մանրածախք և հին գրքերի վնասը . . . | 139 | 29 |
| 5· | Բլանկներ, գզրոց և նստարաններ . . . . | 39 | |
| 6· | Վառելիքի . . . . . . | 43 | 50 |
| 7· | «Ցիշատակարանի», ուսումնարանի գրադարանի ու աղքատ աշակերտների համար գրքերի . . . | 90 | 91 |
| | Գումարն է | 2832 | 44 |

Պատուաւոր Հոգաբարձու Անդամք հոգաբարձութեան՝ Մատթէոս Ափրիկեանց
Գրիգոր քահանայ Բաղդասարեանց
Ստեփան Բատիկեանց
Զօհրապ Աստուածատուրեանց:

---

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ.

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 6 Մարտի Թ· 97, յանուն Ցարգելի Սարգսի Թէմինեան Հախնազարեանց, որում ի յարգանս երկոտասանամեայ անընդհատ և հաւատարիմ հոգաբարձութեան նորա և գանձապահութեան ի դպրոցս Հայոց Վերին—Ագուլեաց՝ շնորհեցաւ նորին յարգութեան կոչումն մշտնջենաւոր պատուաւոր հոգաբարձուի յիշեալ ուսումնարանաց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս, ի 13 Մարտի Թ· 104, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի հոգաբարձութեան ըստ եկեղեցական—ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Սուրամի քաղաքի· Ներսէս քահ· Տէր Պետրոսեանց՝ ի տեղի Ցովսէփ աւագ քահանայի Առաքելեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի Ազգիս ի 13 Մարտի Թ· 105, որով ընդարձակեցան իրաւունք փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ՝ բանալ ի Տաշբուռուն գեղջ եկեղեցական—ծխական միդասեան տղայոց ուսումնարան։

—